



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 օգոստոսի 2014 թվականի N 321-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով <<Շենագնենք մեր գյուղը>> հասարակական կազմակերպության նախագահ՝ Անահիտ Թովմայանի 2014 թվականի օգոստոսի 4-ի գրությունը՝ *որոշում եմ*.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով <<Շենագնենք մեր գյուղը>> հասարակական կազմակերպությանը հատկացնել՝ 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Գումարը դուրս գրել <<Շենագնենք մեր գյուղը>> հասարակական կազմակերպության նախագահ՝ Անահիտ Թովմայանի անունով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2014 թվականի օգոստոսի 07
ք. Հրազդան



Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2014 թվականի օգոստոսի 7-ի N 321-Ա որոշման

Գրամական օգնություն ստացողների ցուցակ

Ը/Ը	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Անահիտ Թովմասյան	ՀՀ Կոտայքի մարզ գ. Արգել	70 000	

